ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի թիվ 2 միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրենությունը հայտարարում է մրցույթ՝ աշխարհագրության (7 դասաժամ) բնության (3 դասաժամ) թվային գրագիտություն և համակարգչային գիտություն առարկայի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

ՈՒսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները հանձնաժողով են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3×4 չափի,

2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3. Անձը հաստատող փաստաթուղթ,

4. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

5. Ինքնակենսագրություն (Ձև 5)

6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթրի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 12-ից մինչև սեպտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 30-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի թիվ 2 միջնակարգ դպրոցում.ժամանակավոր հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Ապարան համայնք, Արագած բնակավայր, 1-ին փողոց, շենք՝ 2 (Արագածի Դերենիկ Դեմիրճյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց):

Տեղեկությունների համար զանգահարել 093-05-22-00, 055-11-15-77 հեռախոսահամարով: